Ուղղությունը. Ֆինանսներ, բակալավրիատ, առկա ուսուցում
Առարկա. Ապահովագրական գործ
Անոտացիա
Աշխատատարությունը՝ *4 կրեդիտ, 144 ակադեմիական ժամ*
Ստուգարք

Համառոտ նկարագրություն. Ժամանակակից տնտեսությունում ապահովագրությունը հանդես է գալիս ֆինանսական կայունարարի դերում, որը թույլ է տալիս հասարակության փոխհատուցել վնասները, որոնք ի հայտ են գալիս չկանխատեսված իրադարձությունների հետևանքով, որնք վնաս են հասցնում կառավարությանը, բիզնեսին և բնակչությանը:

Տեխնոգեն միջավայրը, որում մենք այժմ ապրում ենք, էկոլոգիական և սոցիալական պայմանները բազմակի մեծացնում են ռիսկերը, որոնք սպառնում են մարդկությանը, և ստեղծում են նախկինում չտեսնված կատաստրոֆիկ վնասներ: Առանց ապահովագրական ֆոնդերի ստեղծման հասարակությունը իվիճակի չէր լինի հաղթահարել ի հայտ եկող խնդիրները: Բացի այդ ապահովագրական ֆոնդերում կուտակվող ֆինանսական միջոցները ծառայում են որպես ազգային տնտեսությունում ներդրումների զգալի աղբյուր: Այս հանգամանքները ապահովագրությունը դարձնում են ֆինանսական հատվածի կարևոր ճյուղ: Մի շարք զարգացած երկրներում ապահովագրական ընկերությունները իրենց հզորությամբ և նրանցում կենտրոնացվող կապիտալի չափերով հավասար մակարդակի վրա են կանգնում բանկերի հետ՝ դրանց հետ սերտորեն համագործակցելով:

Ապահովագրությունը գնալով ավելի մեծ դեր է խաղում յուրաքանչյուր ընտանիքի, յուրաքանչյուր մարդու բարեկեցության ապահովման հարցում: ԱՊահովագրության օգնությամբ մարդն պահպանում է իր սեփականությունը, իրեն ապահովում է հիվանդության, աշխատունակության կորստի դեպքում միջոցներով: Երևիթե գոյություն չունի այնպիսի մարդ, ով օգտված չլինի ապահովագրության ծառայություններից, երբևէ դրա օգնությանը դիմած չլինի:

Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ. Դասընթացը սերտորեն կապված է «Տնտեսագիտություն» դասընթացի հետևյալ առարկաների հետ՝ «Միկրոտնտեսագիտություն», «Մակրոտնտեսագիտություն» և այլն: